

Հայկազեան Հայագիտական Հանդեսի ԼԹ. (39րդ) Հատորի Շնորհանդէլը Երեւանի Մէջ

Հայկազեան Հայագիտական Հանդեսի ԼԹ. հատորի Պէյրութի շնորհանդէլը նախատեսուած էր կատարել Չորեքշաբթի, 23 Հոկտեմբեր 2019ի երեկոյեան ժամը 7ին, Հայկազեան Համալսարանի Հանդիսասարահին մէջ եւ յայտարարուած էր մամուլով: Դժբախտաբար, սակայն, երկրին կացութիւնն ու պայմանները անկարելի դարձուցին կայացումը շնորհանդէսին:

Իսկ հատորին շնորհանդէլը Երեւանի մէջ, տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 13 Նոյեմբեր 2019ին, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Գրադարանի Դահլիճին մէջ, ներկայութեամբ Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեանի, Ազգային Գրադարանի տնօրէն Դոկտ. Հրաչեայ Սարիբէկեանի, Հանդէսի պատասխանատու խմբագիր Դոկտ. Անդրանիկ Տազէսեանի, Ազգային Գրադարանի պաշտօնատարներու, Պէյրութէն ժամանած հիւրերու, բարեկամներու, եւ անելի քան յիսուն հետազօտող հայագէտներու, Հանդէսի հին եւ նոր աշխատակիցներու:

Շնորհանդէսին բացումը կատարեց Դոկտ. Սարիբէկեան, որ իր բարիգալուստի խօսքին մէջ կարեւորեց Հայկազեան Համալսարանի հետ գործակցութեան խորացումը, յարատեւումը եւ մաղթեց գործակցութեան նոր ծրագիրներու մշակումը:

Իր խօսքի աւարտին, Դոկտ. Սարիբէկեան եւ Վեր. Դոկտ. Հայտօսթեան ստորագրեցին գործակցութեան յուշագիր՝ Հայկազեան Համալսարանի եւ Ազգային Գրադարանին միջեւ:

Ապա խօսք առաւ Դոկտ. Տազէսեան, որ ընդգծելով Հանդէսի խմբագրակազմին յանձնառութիւնը՝ հայագիտութեան սահմանումին ընդարձակումին ու այժմէականացումին առնչութեամբ, իմիջիայլոց յայտնեց թէ «Հանդէսի 50ամեակին եւ 40րդ հատորին նախաշէմին, ... Հայկազեան Հայագիտական Հանդէլը յատուկ ճիգ պիտի ընէ ընդգրկելու նաեւ Հայաստանի Հանրապետութեան վերջին երեսուն տարիներու կենսագործունէութեան վերաբերող ուսումնասիրութիւններ»:

Իր խօսքին մէջ, Վեր. Դոկտ. Հայտօսթեան հարցադրեց թէ «ինչպիսի միտք, գիտութիւն, լեզու, գրառում, տեղեկութիւն պիտի ուզէինք որ ապագայի ուսումնասիրողները ստացած ըլլային մեզմէ, կամ մեզմէ փոխանցուած ըլլար իրենց: Կայքէջերը եւ պորտլները այսօր կը կատարեն որոշ դերեր եւ կան դրական արդիւնքներ: Սակայն հոն որակի վերահսկումի խնդիրներ կան: Իսկ հայագիտական աւանդական հանդէսները, ակադեմական հիմք ունեցող պարբերականները տակաւին վստահութիւն կը ներշնչեն»: Ան կոչ ուղղեց առաւել աշայլջութեան:

Հանդեսի երեւանի ներկայացուցիչ Դոկտ. Արծուի Բախչինեան ներկայացնելով հատորը համառոտակի անդրադարձաւ Հանդեսի 920 էջերուն մէջ տեղ գտած շուրջ 50 յօդուածներու բովանդակութեան:

Նշուեցաւ նաեւ որ հատորին աշխատակցած են հայ եւ այլազգի շուրջ 50 հայագէտներ Հիւսիսային եւ Հարաւային ամերիկաներէն, Եւրոպայէն, Միջին Արեւելքէն, Հայաստանի Հանրապետութենէն: Աշխատակիցներուն կրտսերագոյնը (համահեղինակ) ծնած է 1999ին, իսկ երիցագոյնը՝ 1939ին:

Շնորհանդէսի աւարտին աշխատակիցները ստացան իրենց առանձնատիպերն ու Հանդեսէն օրինակներ: